# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ
   **Սվետլանա Սահակյան**

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ
   **ՀՀ ԿԳՄՍ նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ**

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ
   **Փարիզ, 16-21-ը փետրվարի**

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ
   **ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային բազմազանության ինքնարտահայտման ձևերի պաշտպանության և խրախուսման կոնվենցիայի կիրարկման քարտուղա-րություն և Ֆրանկոֆոնիայի խաղերի կազմակերպություն**

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային բազմազանության ինքնարտա-հայտման ձևերի պաշտպանության և խրախուսման կոնվենցիայի կիրարկման միջկառավարական կոմիտեի 19-րդ միջկառավարական նիստին՝ իբրև կոնվենցիայի ազգային համակարգող և Ֆրանկոֆոնիայի միջազգային խաղերի կոմիտեի ներկա-յացուցիչների հետ հանդիպում՝ 2027 թվականին Երևանում կայանալիք խաղերի մշակութային վայրերի վերջնական հստակեցման և այլ կազմակերպական հարցերի համար:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Նիստի օրակարգով նախատեսված էր 13 հարցի քննարկում: Դրանց թվում. Կոնվենցիայի շրջանակում գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակու-թյան դիտորդների ցանկի հաստատումը, Քարտուղարության 2025 թվականի

գործունեության հաշվետվության հաստատումը և 2026-2027 թվականների աշխատանքային ծրագրի և բյուջեի հաստատումը, Կոնվենցիայի 16-րդ հոդվածի կիրարկման, թվային միջավայրի մասին կոնվենցիային վերաբերող հարցերը, Մշակութային բազմազանության միջազգային հիմնադրամի գործունեության հաշվետվությունը և նշյալ հիմնադրամի կողմից ընտրված նախագծերի հաստատումը, ինքնազբաղ արվեստագետներին և ՀԿ-ներին աջակցելու, քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու հարցերը, Կոնվենցիայի հոբելյանական միջոցառումների ամփոփումը, միջկառավարական կոմիտեի 20-րդ նիստի անցկացման ժամկետների և Բյուրոյի անդամների ընտրության հարցերը:

## 7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

2026 թվականի փետրվարի 16-21-ը մեկնել էի Փարիզ՝ իբրև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային բազմազանության ինքնարտահայտման ձևերի պաշտպանության և խրախուսման կոնվենցիայի ազգային համակարգող մասնակցելու վերոնշյալ կոնվենցիայի կիրարկման միջկառավարական կոմիտեի 19-րդ նիստին, ինչպես նաև Ֆրանկոֆոնիայի միջազգային խաղերի կոմիտեի ներկայացուցիչների հետ քննարկելու և հստակեցնելու՝ 2027 թվականին Երևանում կայանալիք խաղերի մշակութային վայրերը և այլ կազմակերպական հարցեր:

Հայաստանյան պատվիրակությունը միջկառավարական կոմիտեի 19-րդ նիստին ներկայացնում էին ՅՈՒՆԵՍԿՕ-յում ՀՀ մշտական ներկայացուցչության ղեկավար՝ դեսպան Արամ Հակոբյանը, ներկայացուցչության աշխատակից Լիա Միրզոյանը և ես:

ՅՈՒՆԵՍԿՕ-յում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան Արամ Հակոբյանը ելույթ ունեցավ օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ, իսկ ներկայացուցչության աշխատակից Լիա Միրզոյանը՝ օրակարգի 5 -րդ և 7c հարցերի վերաբերյալ:

Իմ ելույթները վերաբերում էին օրակարգի 7a, 7b, 8-րդ և 10-րդ հարցերին:

Առաջին օրը՝ մինչև նիստի մեկնարկը, կայացավ հասարակական կազմակերպությունների և Կոնվենցիայի համակարգող այլ կազմակերպությունների հանդիպումը:

Վերոնշյալ հանդիպմանը հաջորդեղ նիստի պաշտոնական բացումը:Նիստը նախագահում էր ՅՈՒՆԵՍԿՕ-յում Պերուի դեսպանը: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի մշակութային հարցերով տեղակալ Էռնեստո Օտտոնեն, ով այս աշխատանքները համակարգել էր 8 տարիների ընթացքում:

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Մավրիտանիայի և Սենեգալի նախարարի տեղակալները, ովքեր ներկայացրեցին իրենց երկրներում Կոնվենցիայի կիրարկման ընթացքը:

Պաշտոնական ելույթներից հետո, նախագահողը հայտարարեց նիստը բացված: Նա նաև առաջարկեց մասնակիցներին՝ պահպանելով հատկացված ժամանակը, ակտիվորեն մասնակցել քննարկումներին և որոշումների կայացմանը՝ առաջարկություններն ուղարկելով քարտուղարության էլեկտրոնային փոստին:

Կոնվենցիայի քարտուղարը ներկայացրեց նաև թե ինչպես է ձևավորվել նիստի օրակարգը և առաջարկեց այն հաստատել, միաժամանակ տեղեկացնելով, որ բոլոր աշխատանքային փաստաթղթերը հասանելի են առցանց, ուստի եթե կլինեն առաջարկություններ որոշումների վերաբերյալ, ապա դրանք կարող են ուղարկվել համապատասխան էլ փոստով:

Օրակարգը հաստատվեց միաձայն, որից հետո Կոնվենցիայի քարտուղարը ներկայացրեց Կոնվենցիայի դիտորդների՝ քաղաքացիական հասարակության և միջպետական կազմակերպությունների ներկայացուցիչների ցանկը (Օրակարգի 2-րդ հարց): Նիստը նախագահողը առաջարկեց հաստատել ցանկը: Որոշումն ընդունվեց միաձայն :

Օրակարգի 3-րդ հարցը նույնպես ընդունվեց միաձայն՝ առանց խմբագրումների:

Օրակարգի 4-րդ հարցը, որը վերաբերում էր քարտուղարության 2025 թվականի աշխատանքին, ներկայացրեց Կոնվենցիայի քարտուղարը: Նա խոսեց Կոմիտեի և քարտուղարության 2025 թվականի գործունեության՝ հատկապես հոբելյանական միջոցառումների, մասնակից երկրների, թվային միջավայրի Կոնվենցիայի, ստեղծա-րարության, Հիմնադրամի գործունեության մասին: Նա նշեց, որ հիմնադրամի գործունեությունը մեծապես հաջողեց Շվեդական ՍԻԴԱ, Ֆրանսիայի, Կանադայի և Քվեբեկի կառավարությունների շնորհիվ: Նա միաժամանակ տեղեկացրեց, որ Կոն-վենցիայի նոր անդամ են դարձել Շրի Լանկան, Բահրեյնը և Սիերա Լեոնեն: Նա նաև

անդրադարձավ քարտուղարության ձեռնարկած քայլերին՝ հաստատված 4 առաջնահերթությունները (որոնցից են կարողությունների զարգացումը IFDC-ի շրջանակներում և ծրագրային գործունեության խրախուսումը) կյանքի կոչելու հարցում:

Շնորհակալություն հայտնելով քարտուղարությանը լավ աշխատանքի համար, Նախագահը առաջարկեց մասնակիցներին հանդես գալ ելույթներով կամ մեկնաբանություններով: Սահմանված ընթացակարգի համաձայն, սկզբում ելույթ ունեցան Կոմիտեի անդամ երկրների (Հայաստանի, Բելգիայի, Բրազիլիայի, Կանադայի, Հարավային Աֆրիկայի, Պանամայի, Ադրբեջանի, Կորեայի, Չիլիի, Գվինեայի, Լատվիայի, Վիետնամի, Կոլումբիայի, Ռումինիայի, Տանզանիայի, ֆիլիպինների, Հորդանանի, Շվեդիայի, Պերուի, Թունիսի, Կոտ դ'Իվուարի) ներկայացուցիչները, ապա ոչ կոմիտեի անդամ երկրների (Պաղեստինի, Ալժիրի, Կուբայի, -Բուրկինա Ֆասոյի, Մալիի, Մարոկկոյի, Ավստրիայի, Նիդերլանդների, Նորվեգիայի, Չինաստանի, Սաուդյան Արաբիայի, Մոնղոլիայի, Ուրուգվայի, Չեխիայի, Տոգոյի, Մեքսիկայի, Իսպանիայի, Ինդոնեզիայի, Քուվեյթի) ներկայացուցիչները: Հարցի առնչությամբ ելույթ ունեցան նաև նիստին մասնակցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Բոլորը կարևորեցին ստեղծարարության ոլորտում կրթական բաղադրիչի և ծրագրերի իրականացումը, ինչը կնպաստի մշակութային բազմազանության պահպանությանը և ինքնարտահայտմանը, ճգնաժամային իրավիճակներում արվեստագետների ստեղծագործական ազատությունների և իրավունքների պաշտպանությանը, արհեստական բանականության ու թվային միջավայրի կոնվենցիայի հարցերին և առանձնակի շնորհակալություն հայտնեցին ՅՈՒՆԵՍԿՕ-գլխավոր տնօրենի մշակույթի հարցերով տեղակալ Էռնեստո Օտտոնեին այս ուղղությամբ կատարած աշխատանքի և Կոնվենցիայի կիրարկման ուղղված ջանքերի համար:

Ամփոփելով ելույթները, Կոնվենցիայի քարտուղարը անդրադարձավ հնչեցրած հարցերին, այդ թվում՝ ճգնաժամային իրավիճակներում արվեստագետների իրավունքներին, ստեղծարարության ազատությանը և արհեստական

բանականության և թվային միջավայրի կոնվենցիային: Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ որոշումը ևս ընդունվեց միաձայն:

Օրակարգի 5-րդ հարցը վերաբերում էր քաղաքացիական հասարակության հետ համագործակցությանը և կայացած 5-րդ համաժողովին: Հարցը զեկուցեց Կոնվենցիայի քարտուղարը: Նա նշեց, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցության երկու տարբերակ է քննարկվել՝ դիտարկել իրենց մասնակցությունը նիստերին և երկրորդը՝ ֆորումների անցկացում և գործակցում իրենց հետ՝ փորձագիտական մակարդակով: Նա տեղեկացրեց նիստի շրջանակներում կայացած քաղաքացիական հասարակության 5-րդ համաժողովի արդյունքների մասին, ընդգծելով, որ համաժողովը կարևորել և ընդգծել էր քաղաքացիական հասարակության և ՀԿ-ների դերը արվեստագետների շարժունակության, իրավունքների և ստեղծարարության ու ինքնարտահայտման հարցում՝ այդ թվում արհեստական բանականության առաջացրած մարտահրավերների և ճգնաժամային իրավիճակներում և պետք է շարունակել ամրապնդել համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ՝ մշակույթի էկոհամակարգի և թվային միջավայրում ստեղծարարության ու արվեստագետների իրավունքների պաշտպանության համար:

Ապա մեկնարկեց մտքերի փոխանակումը, որը սկսեցին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Նրանք առաջարկեցին Կոնվենցիայի անդամ և դիտորդ երկրներին դյուրացնել արվեստագետներին (ներառյալ երիտասարդ արվեստագետներին) վիզաների տրամադրումը, ապահովել շարժունակությունը, խթանել մշակութային փոխանակումները, կամավորությունը, լեզվական բազմազանությունը, տեղեկատվական բազաներ ձևավորումը, ներդրումներ կատարել աշխատանքները քարտեզագրելու համար: Նրանք անդրադարձան նաև օրակարգի այլ հարցերին, որի վերաբերյալ համաժողովում որոշումներ են առաջարկվել:

Ապա ելույթ ունեցան Կոնվենցիայի կոմիտեի անդամ երկրների (Բրազիլիայի, Բելգիայի, Հայաստանի, Թունիսի, Շվեդիայի, Պերուի, Ադրբեջանի, Կոլումբիայի) ներկայացուցիչները: Քննարկմանը միացան նաև կոմիտեի ոչ անդամ երկրների (Ավստրիայի, Ուրուգվայի, Մարոկկոյի) ներկայացուցիչները: Բոլոր ելույթ ունեցողները

կարևորեցին համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ: Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ որոշումը նույնպես ընդունվեց միաձայն:

Օրակարգի 6-րդ հարցը վերաբերում էր Կոմտիեի 2026-2027 թվականների գործունեությանը: Հարցը ներկայացրեց Կոնվենցիայի քարտուղար Տուսսենը՝ հատուկ անդրադարձ կատարելով ռազմավարական 5 ուղղություններին՝ ապահովել կառավարությունների ներգրավվածությունն ու մասնակցությունը կոնվենցիային, խրախուսել քաղաքականությունների արդյունավետ գործարկումը, կիրարկել կոնվենցիայի 16-րդ հոդվածը, խրախուսել լեզվական բազմազանությունը՝ ընդգծելով, որ դրանք պարտադիր պետք է կատարվեն:

Բրազիլիայի ներկայացուցիչը հարց բարձրացրեց լեզվական բազմազանության վերաբերյալ, նշելով, որ դա անչափ կարևոր է: Նա նաև կարևորեց գործունեությունը ճգնաժամային իրավիճակներում: Արտահայտվեց նաև Շվեդիայի ներկայացուցիչը, ով կարևորեց աշխատանքների շարունակականությունը ստեղծագործական ազատության և ճգնաժամային իրավիճակներում արվեստագետների իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Նա նաև ընդգծեց, որ սա պետք է լինի Քարտուղարության հիմնական գործունեություններից մեկը: Ելույթ ունեցան նաև Թունիսի, Պորտուգալիայի, Կոլումբիայի, Հարավային Աֆրիկայի ներկայացուցիչները:

Ադրբեջանի ներկայացուցիչը բարձրացրեց ծրագրի և հիմնադրամի ֆինանսավորման հարցը:

Մինչ որոշման ընդունումը Կոնվենցիայի քարտուղար Տուսսենը անդրադարձավ Քարտուղարության ապագա գործունեությանը վերաբերող հարցերին: Նա նշեց, որ Քարտուղարությունը ապագայում պետք է նախապատրաստի հաջորդ տարվա նիստերը, ապահովի Հիմնադրամի, անդամավճարների և մեկենասական ներդրումների ստացման աշխատանքները, խթանի լեզվական բազմազանությունը: Նա նաև նշեց, որ Հիմնադրամը ֆինանսավորվում է բացառապես կամավոր ներդրումների հաշվին:

Հարցի առնչությամբ ելույթ ունեցան նաև Կոմիտեի ոչ անդամ երկրների (Շվեյցարիայի, Ուրուգվայի, Նորվեգիայի) ներկայացուցիչները:

Որոշումն ընդունվեց որոշակի փոփոխություններով, որոնք առաջարկվել էին Կոլումբիայի, Բելգիայի, Թունիսի, Բրազիլիայի, Չիլիի, Պորտուգալիայի, Գվինեայի, Մավրիտանիայի, Վիետնամի ներկայացուցիչների կողմից՝ այն է նշյալ աշխատանքային ծրագրի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել Պետությունների 11-րդ կոնֆերանսի հաստատմանը: Բելգիայի ներկայացուցիչը նաև առաջարկեց կազմակերպել միջազգային հանդիպում, որտեղ ներկա կլինեն թվային միջավայրի բոլոր դերակատարները՝ պետական կառույցներ, շահագրգիռ կազմակերպություններ, ներդրողներ, մասնավոր և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Նա նաև տեղեկացրեց, որ Բելգիան պատրաստ է ներդրում անել (200 մլն դոլարի չափով) այս գործընթացը իրականացնելու և ճիշտ որոշման հանգելու համար:

Հայաստանը ևս պաշտպանեց Բելգիայի առաջարկը՝ թվային միջավայրի հարցը քննարկել բոլոր դերակատարների մասնակցությամբ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշակույթի հարցերով տեղակալ Օտտոնեն պարզաբանեց, որ հարցը իսկապես կարիք ունի քննարկման, բայց որոշման ընդունումը նույնպես կարևոր է և բնավ չի խոչընդոտի առաջարկվող բազմակողմանի քննարկումները:

Որոշման կետերի վերաբերյալ խոսեց նաև ճգնաժամային իրավիճակում գտնվող արվեստագետների հարցերով զբաղվող ՀԿ-ն: Քննարկումների արդյունքում, առաջարկվող որոշումն ընդունվեց համապատասխան լրացումներով:

Ընդմիջմանը մասնակցեցին Հասարակական կազմակերպության կողմից նախաձեռնած թվային միջավայրի քննարկմանը, որտեղ ելույթ ունեցա ն Կանադայի և Քվեբեկի մշակույթի նախարարները և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշակույթի հարցերով տեղեկալ Էռնեստո Օտտոնեն: Քննարկումը նախաձեռնել էր կանադական կողմը: Բանախոսներն էին ոլորտի մասնագետները, ովքեր որ բացատրեցին թվային միջավայրի կոնվենցիայի ընդունման և համապատասխան դիրեկտիվների ընդնունման կարևորությունը:

Նույն օրը կեսօրին նիստին մասնակցող ԻՖՍԴՍ ՀԿ-ն նախաձեռնել էր Թվային միջավայրի կոնվենցիային վերաբերող քննարկում, որին մասնակցում էին և ելույթներով հանդես եկան Կանադայի և Քվեբեկի մշակույթի նախարարները, ինչպես

նաև ոլորտի ճանաչված փորձագետներ: Քննարկումների մասնակիցները միաձայն հաստատեցին, որ Թվային միջավայրի կոնվենցիայի կիրարկումը կարևոր է, սակայն բոլոր խոցելի հարցերի վերաբերյալ լուծումներ գտնելու նպատակով անհրաժեշտ է գործընթացի մեջ ներառել բոլոր դերակատարներին:

Փետրվարի 18-ի երկրորդ կեսի նիստը մեկնարկեց մշակութային քաղաքականությանը նվիրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատրաստած զեկույցի շնորհանդեսով, որի հիմնական բանախոսն էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշակույթի հարցերով տեղակալ Էռնեստո Օտտոնեն, Կոնվեցիայի քարտուղար Տուսսենը և ուսումնասիրությունը հեղինակած փորձագետ-վերլուծաբանները: Բոլոր ելույթ ունեցողները կարևորում էին զեկույցը այն համատեքստում, որ անհրաժեշտություն էր առաջացել տեղեկատվական բազաների և թվային տվյալների թարմացման և ցուցիչների հստակեցման: Զեկույցում, որը պատրաստվել էր Շվեդիայի ֆինանսական աջակցությամբ, դիտարկվել են մշակույթի բոլոր տեսանկյունից՝ ներառյալ կապը կլիմայի և բնապահպանական խնդիրների հետ:

Կանադայի և Քվեբեկի մշակույթի նախարարների ելույթներով, ովքեր խոսեցին Կոնվենցիայի կարևորության և 20-տարվա ձեռքբերումների, ինչպես նաև ֆրանկոֆոն միջավայրի ձևավորմանն ու ընդլայմանն ուղղված Ֆրանկոֆոն երկրների ջանքերի մասին: Անդրադարձ կատարվեց նաև ստեղծարար արդյունաբերությանը, թվային միջավայրի կանոնակարգմանը և արհեստական բանականությանը, լեզվական բազմազանության պաշտպանությանը, Կոնվենցիայի 16-րդ հոդվածի կիրարկմանը և 2025 թվականին Քվեբեկում կայացած ֆրանկոֆոն նախարարների համաժողովի որոշումների մասին: Կանադայի նախարարը խոսեց նաև Ֆրանկոֆոն դեսպանների խմբի անունից և տեղեկացրեց, որ Կանադան 3 մլն դոլար է հատկացրել IFCD-ին վերջին 2 տարվա համար:

Օրակարգի 7-րդ հարցը բաղկացած էր 3 ենթահարցից և վերաբերում էր թվային միջավայրի Կոնվենցիային:

7.a ենթահարցը անդրադառնում էր հաստատված առաջարկությունների ներդրմանը: Հարցը զեկուցեց Կոնվենցիայի քարտուղարը, ով առանձնահատուկ խոսեց քարտուղարության 11 երաշխավորությունների (ռեկոմենդացիաների) մասին: Ելույթ ունեցող կոմիտեի անդամ երկրների թվում էին՝ Պորտուգալիայի, Պանամայի,

Ադրբեջանի, Ֆիլիպինների, Լատվիայի, Պերույի, Կանադայի ներկայացուցիչները Վերջինս առաջակեց ֆինանսական աջակցություն՝ ռեկոմենդացիաները կիրակելու համար:

Ելույթ ունեցա նաև ես: Ներկայացնելով Հայաստանում արհեստական բանականությանն կրթական ծրագրերը, խոսեցի «STEP.ai – արհեստական բանականություն» կրթական ծրագրի, ԵՊՀ-ում բացված «YSU-Krisp AI Lab»-գիտակրթական լաբորատորիայի և Հրազդանում ապագայում հիմնվող արհեստական բանականության գործարանի մասին: Նաև նշեցի, որ արհեստական բանականության առավելությունների և մարտահրավերների, նոր տեխնոլոգիաներին տիրապետելու հարցերի շուրջ քննարկումներ և սեմինարներ, կրթական ծրագրեր իրականացվում են նաև արվեստագետների համար:

Քարտուղարությունը շնորհակալություն հայտնեց Կանադային և Բելգիային ֆինանսական աջակցության և այն տեղեկատվության համար, որը փոխանցեցին անդամ երկրները՝ իրենց մոտ ռեկոմենդացիաները կիրարկելու համար: Միևնույն ժամանակ նա խնդրեց երկրներին կիրարկել ռեկոմենդացիաները հնարավորինս շատ և այն ներառել նաև քառամյա զեկույցներում:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ տվեց նաև Էռնեստո Օտտոնեն՝նշելով, որ այս գործում կարևոր է նաև Կոնվենցիայի համակարգողների դերակատարությունը:

Ապա ելույթ ունեցավ Կոմիտեի ոչ անդամ երկրների (Նիգերիայի, Ինդոնեզիայի) և քաղաքացիական հասարակության՝ ԻՖՍԴՍ ներկայացուցիչները:

Որոշման նախագիծն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 7.b  հարցի՝ Թվային միջավայրի կոնվենցիայի կիրարկման դիրեկտիվների փոփոխության մասին խոսեց Սենեգալի ներկայացուցիչը:

Հարցի վերաբերյալ արտահայտվեցին Կանադայի, Ադրբեջանի, Կորեայի, Բելգիայի, Լատվիայի, Շվեդիայի, Կանադայի, Թունիսի, Կոլումբիայի, Հարավային Աֆրիկայի, Ռումինիայի, Պերուի, Պորտուգալիայի ներկայացուցիչները:

Խոսեցի նաև ես: Ելույթումս կարևորեցի թվային միջավայրի կոնվենցիայի շուրջ քննարկումները և դիրեկտիվների հստակեցումն ու կիրարկումը: Նաև նշեցի, որ կարևորում ենք այս ուղղությամբ փորձի փոխանակման, բոլոր դերակատարների մասնակցությամբ քննարկումների և քարտուղարության կողմից աշխատանքների

շարունակականությունը: Նաև նշեցի, որ Բելգիայի պատվիրակության առաջարկը ընդունելի է նաև Հայաստանի համար:

Իր պարզաբանումները տվեց նաև Կոնվենցիայի քարտուղարը՝ նշելով, որ նիստի առաջարկությունների հիման վրա Քարտուղարությունը կլրամշակի փաստաթուղթը և կներկայացնի հաջորդ տարվա նիստին, որտեղ պետությունները հոդված առ հոդված կանդրադառնան փաստաթղթին:

Ապա ելույթ ունեցան Կոմիտեի ոչ անդամ երկրներն ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Առաջինն իր դիրքորոշումն հայտնեց Ավստրիան, ապա խոսեցին Սենեգալի, ,Ջամայկայի, Նիդեռլանդների, Ուրուգվայի, Բուրկինա Ֆասոյի, Գերմանիայի, Ջիբութիի, Շվեյցարիայի, Մարոկկոյի ներկայացուցիչները: Տեսնելով, որ քննարկումները երկարում են, Հարավային Աֆրիկայի ներկայացուցիչն առաջարկեց այն իրականացնել առցանց և հաշվի առնելով դրանց կարևորությունը ներգրավել համապատասխան փորձագետների:

Հարցի առնչությամբ իրենց դիրքորոշումը հայտնեցին հասարակական կազմակերպությունները:

Փետրվարի 19-ին 7-րդ հարցի b կետի շուրջ քննարկումները շարունակվեցին:

Պարզաբանելով որոշման կետերը, Կոնվենցիայի քարտուղարը կրկին. նշեց, որ Հավելվածի փոփոխությունը պահանջում է փորձագիտական քննարկում, որ կարելի է կազմակերպել այս տարվա հոկտեմբեր ամսին՝ առցանց:, որից հետո լրամշակված փաստաթուղթը կներկայացվի հաջորդ տարվա հունվարյան, ապա մարտյան նիստերին:

Ապա պարզաբանումներ տվեց Օտտոնեն, ով առաջարկեց որոշումը հաստատել կետ առ կետ, հետագայում իրականացնելով առցանց քննարկում, որի արդյունքում հնարավոր կլինի խմբագրել հավելվածը: Որոշումն ընդունվեց էական խմբագրումներով, որոնք վերաբերում էի փաստաթղթի լրամշակմանը: Առաջարկվեց ամրագրել, որ Կոմիտեի անդամ երկրներն իրենց գրավոր առաջարկությունները Քարտուղարություն պետք է ներկայացնեն մինչև **ապրիլի 15**-ը: Կոնվենցիայի մյուս անդամ երկրները, դիտորդները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և փորձագետները պետք է ներկայացնեն իրենց դիտարկումները:

Միևնույն ժամանակ, որոշման մեջ ամրագրվեց, որ առցանց քննարկումները Քարտուղարությունը Կոմիտեի անդամների հետ կկազմակերպի **2026 թվականի հոկտեմբերին**, իսկ փաստաթուղթը կամփոփի **2026 թվականի նոյեմբերին**:

Կեսօրին կայացավ նաև ազգային հանձնաժողովների և Կոնվենցիայի ազգային համակարգողների հանդիպումը, որը նախաձեռնել էր Կոնվենցիայի կիրարկումն ապահովող քարտուղարությունը: Բացեց հանդիպումը քարտուղարության ղեկավարը: Նա նշեց, որ հանդիպման նպատակն է տեղեկատվություն փոխանցել համագործակցության վերաբերյալ և նպաստել երկխոսության ակտիվացմանը: Նա նաև նշեց, որ ազգային հանձնաժողովները և ազգային համակարգողները պետք է մշտապես աջակցեն կոնվենցիայի կիրարկմանը:

Ապա նիստը շարունակեց Կարոլին Մենյեն, ով համակարգում է մշակութային համագործակցության հարցերը: Հանդիպման ընթացքում խոսվեց քառամյա զեկույցների ներկայացման և արվեստագետների կարգավիճակի վեց գլոբալ խորհրդատվությունների ռեկոմենդացիաների կիրարկման մասին: Քարտուղարությունը տեղեկացրեց, որ քառամյա զեկույցների նոր շրջանը կմեկնարկի 2027 վականին:

Կարևորվեց ստեղծված միջազգային աշխատանքային խմբի գործունեությունը և թվայնացման հարցը: ՅՈՒՆԵՍԿՕ քարտուղարկությունը նաև շնորհակալություն հայտնեց այն երկրներին, որոնք մասնակցել են Կոնվենցիայի 20-ամյակի միջոցառումներին:

Ազգային համակարգողներին ներկայացվեց Հիմնադրամի (IFCD-ի) աշխատանքը՝ ընդգծելով ազգային համակորգողների դերակատարությունը այդ աշխատանքներ իրականացնելու գործում:

Ներկայացվեցին նաև IFCD-ի ծրագրերը և ֆինանսավորման մեխանիզմները: Համակարգողը խնդրեց անդամ երկրների ֆինանսական աջակցություն հատկացնել Հիմնադրամին: Նշվեց նաև, որ հայտերի մեկնարկը կտրվի մարտին, հետևաբար ազգային մակարդակով ընտրությունը պետք է ավարտված լինի հունիսին: Կարող է ներկայացվել առավելագույնը 4 նախագիծ: Անդրադարձ կատարվեց նաև Aschberg ծրագրին, որի հայտերի ընդունման վերջնաժամկետը փետրվարի 23-ն է:

Հանդիպմանը հաջորդեց նիստի շարունակությունը, որը սկսվեց Օրակարգի 7 c հարցով: Ներկայացնելով հարցը Կոնվենցիայի քարտուղարը տեղեկացրեց, որ աշխատանքային խումբը ուսումնասիրել է կից Արձանագրությունը և թվային միջավայրի կոնվենցիայի կիրարկման խնդիրը իրավական տեսանկյունից դյուրացնելու հնարավորությունը: Նա նաև տեղեկացրեց, որ 7c աշխատանքային փաստաթուղթը ձևավորվել է անդամ երկրների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում :

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցան Բրազիլիայի, Բելգիայի, Պանամայի, Կանադայի, Քվեբեկի, Լատվիայի, Հայաստանի, Ադրբեջանի, Վիետնամի, Թունիսի, Պերուի, Շվեդիայի, Կոլումբիայի, Հարավային Աֆրիկայի, Չիլիի, ներկայացուցիչները: Ապա ելույթ ունեցան Կոնվենցիայի Կոմիտեի ոչ անդամ երկրների՝ Ֆրանսիայի, Ինդոնեզիայի, Իսպանիայի, Ավստրիայի, Շվեդիայի, Ուրուգվայի, Պարագվայի, Գերմանիայի, Հոնդուրասի, Մեքսիկայի, Դոմինիկանայի, Նիդեռլանդների, Մարոկկոյի, Ֆինլանդիայի, Գվատեմալայի, Լյուքսեմբուրգի, Կորեայի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

Բոլորը շնորհակալություն հայտնեցին կատարված աշխատանքի համար: Կոնվենցիայի քարտուղարը շնորհակալություն հայտնեց ուսումնասիրությունը պատրաստողներին, ինչպես նաև Կոնվենցիայի անդամ երկրներին աջակցելու և կատարված աշխատանքը գնահատելու համար:

Որոշումն ընդունվեց որոշակի խմբագրմամբ:

Օրակարգի 8-րդ հարցը, որը վերաբերում էր Կոնվենցիայի 16-րդ հոդվածին և դրա կիրարկմանն ուղղված 5 ռեկոմենդացիաներին, զեկուցեց Կոնվենցիայի քարտուղարը:

Ելույթ ունեցան Կոլումբիայի, Թունիսի, Ադրբեջանի, Չիլիի, Ջիբութիի ներկայացուցիչները:

Ելույթ ունեցա նաև ես: Շնորհակալություն հայտնելով քարտուղարությանը հանգամանալից ներկայացման համար, նշեցի, որ հարցը մեզ համար անչափ կարևոր է և մենք արդեն իսկ կիրարկում ենք հոդված 16-ը և նրա ռեկոմենդացիաները: Միևնույն ժամանակ նշեցի, որ փորձի փոխանակումը և միջազգային համագործակցությունը կարևոր գործիք է Կոնվենցիայի համապատասխան հոդվածը

կիրարկելու համար և Հայաստանը պատրաստ է ներկայացնել նաև իր հաջողված փորձը:

Կոնվենցիայի քարտուղարը լրացուցիչ պարզաբանումներ տվեց ռեկոմենդացիաների կիրարկման համար:

Ապա ելույթ ունեցան Կոմիտեի ոչ անդամ երկրների՝ Քենիայի, Սենեգալի, Ուրուգվայի, Ինդոնեզիայի, Ջամայկայի, Մարոկկոյի, Սեն Վինսենտ և Գրենադինի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Վերջիններս կարևորեցին հոդվածի և ռեկոմենդացիաների կիրարկումը՝ մասնավորապես արվեստագետների մոբիլությունը զարգացող երկրների համար ապահովելու համար և միաժամանակ հարց բարձրացրեցին Գազայում արվեստագետների կարգավիճակի վերաբերյալ:

Հարցի վերաբերյալ որոշումն ընդունվեց մեկ խմբագրմամբ:

Հետո քննարկվեց Օրակարգի 9-րդ հարցը, որը բաղկացած էր երկու ենթակետից:

9-րդ հարցին ա) կետը վերաբերում էր Մշակութային բազմազանության ինքնարտահայտման ձևերի պաշտպանության և խրախուսման կոնվենցիայի միջազգային հիմնադրամի 2025 թվականի գործունեությանը և կատարած աշխատանքների հաշվետվությանը:

Հարցը զեկուցեցին քարտուղարության ղեկավարը և ծրագրի ղեկավարը:. Նրանք տեղեկացրեցին, թե ինչպիսի գործունեություն է ծավալել հիմնադրամը և ինչ խնդիրներ ունի ֆոնդահայթայթման գործում: Ներկաներին բացատրվեցին նաև հիմնադրամի կողմից ծրագրերի ֆինանսավորման սկզբունքներն ու չափորոշիչները: Ընդգծվեց, որ առաջնահերթություն են համարվում այն նախագծերը, որոնք վերաբերում են հմտությունների (մասնագիտական և տեխնիկական աջակցություն, այդ թվում տեղեկատվական բնույթի) զարգացմանը: Նշվեց նաև, որ 2025 թվականին ստացվել է 36 և հաստատվել 11 հայտ, որոնք դիտարկվել և գնահատվել են 5 չափորոշիչներով (այդ տեղեկատվությունը հասանելի է ՅՈՒՆԵՍԿՕ-ի վեբկայքում): Քարտուղարությունը առանձին-առանձին ներկայացրեց նաև ֆինանսավորում ստացած նախագծերը, բացատրելով ընտրության առաջնահերությունները: Քարտուղարը նաև շնորհակալություն հայտնեց այն անդամ երկրներին, որոնք վճարել են իրենց անդամավճարները: Հայաստանը այդ երկրների թվում է:

Ապա սկսվեց մտքերի փոխանակումը: Կոմիտեի անդամ երկրներից ելույթ ունեցան՝ Հարավային Աֆրիկայի, Բելգիայի, Բրազիլիայի ներկայացուցիչները, ելույթները շարունակեցին ոչ անդամ երկրների՝ Մարոկկոյի, Ուկրաինայի, Նիդեռլանդների, Զիմբաբվեի, Հորդանանի, Լատվիայի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

9-րդ հարցին ա) կետի որոշումը հաստատվեց միաձայն:

9-րդ հարցի բ) կետը՝ Հիմնադրամի 2026-2027 թվականների գործունեությունը ներկայացրեց քարտուղարը, նշելով որ հիմնադարմի հիմնական ֆինանսավորումը իրականացվում է ԱՄՆ-ի, ապա Ֆրանսիայի և Նորվեգիայի կողմից: Նա նաև ներկայացրեց, թե երբ և ինչ մեխանիզմով են ընդունվելու հաջորդ տարվա հայտերը:

Հարցի քննարկման արդյունքում առաջարկվող որոշումը խմբագրվեց և հաստատվեց: Ամփոփելով ելույթները, քարտուղարը նշեց, որ ողջունում են հիմնադրամի ֆինանսական աջակցության նոր հնարավորությունները:

Փետրվարի 20-ին կայացավ նիստի օրակարգի 10-13 հարցերի քննարկումը, որից առաջինը վերաբերում էր Կոնվենցիայի 20-ամյակի միջոցառումների ամփոփմանը: Հարցը զեկուցեց Կոնվենցիայի քարտուղարը, ով նշեց, որ իրականացվել է շուրջ 227 միջոցառում՝ ընդգրկելով ողջ աշխարհը և Կոնվենցիայի բոլոր դերակատարներին: Դրանք բազմաբնույթ էին և բազմատեսակ: Նա շնորհակալություն հայտնեց երկրներին կատարված աշխատանքի համար:

Ապա ելույթ ունեցան երկրները (Ռումինիան, Կորեան, Բելգիան, Շվեդիան, Լատվիան, Ադրբեջանը, Վիետնամը, Բելառուսը, Գերմանիան, Մարոկկոն, Չեխիան, Ինդոնեզիան, Կանադան)՝ ներկայացնելով իրենց կողմից իրականացված միջոցառումները, նշելով, որ դրանք նպաստում են Կոնվենցիայի վերաբերյալ ճանաչողության բարձրացմանը և մշակութային բազմազանության պահպանմանն ու տարածմանը:

Հոբելյանական միջոցառումների հարցի շուրջ ելույթ ունեցա նաև ես: Շնորհակալություն հայտնելով քարտուղարությանը ամբողջական և բովանդակալից տեղեկատվություն համար, տեղեկացրեցի Հայաստանի կողմից կազմակերպված միջոցառումների մասին և առանձնակի կանգ առա «Մշակութային խաչմերուկ» միջազգային կոնֆերանսի վրա: Խոսեցի վերջինիս նշանակության, մանակից

երկրների և կառույցների մասին և հրավիրեցի Կոնվենցիայի անդամ երկրներին Երևան՝ հաջորդ կոնֆերանսին, որը տեղի կունենա 2027 թվականին:

Հարցի առնչությամբ խոսեցին նաև Արվեստի միջազգային խորհրդի, Երաժշտության միջազգային խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, ովքեր կարևորեցին հոբելյանական միջոցառումները և խոսեցին դրանց նշանակության մասին:

Հարցի քննարկման վերջում բոլոր երկրները հատուկ շնորհակալություն հայտնեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշակույթի հարցերով տեղակալ Էռնեստո Օտտոնեին իր կատարած աշխատանքի համար: Հարցի որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 11-րդ հարցը վերաբերում էր հաջորդ նիստի ժամկետների հաստատմանը: Քարտուղարությունը տեղակացրեց, որ միջկառավարական կոմիտեի հաջորդ նիստը կկայանա 2027 թվականի հունվարի 12-15-ը՝ պայմանավորված Գործադիր խորհրդի նստաշրջանի ժամկետով (մարտ):

Օրակարգի 12-րդ հարցը վերաբերում էր բյուրոյի անդամների ընտրությանը:

Բյուրոյի նախագահ ընտրվեց ***ՅՈՒՆԵՍԿՕ-յում Ջիբութիի ներկայացուցիչը: Բյուրոյի փոխնախագահ ընտրվեցին Ադրբեջանի, Բելգիայի, Պանամայի, Ֆիլիպինների*** *ներկայացուցիչները,* ***արձանագրող-զեկուցող՝ Թունիսի*** *ներկայացուցիչը:*

Օրակարգի վերջին՝ 13-րդ հարցի շրջանակներում առաջարկվեց հատուկ անդրադարձ կատարել Գազայում տեղի ունեցող դեպքերին, նշելով, որ քանդվում եմ մշակութային հաստատություններ, հուշարձաններ, զոհվում եմ արվեստագետներ: Առաջարկությունը նախաձեռնել էր Հորդանանի պատվիրակությունը:

Նիստի ավարտին մասնակիցները շնորհակալություն հայտնեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշակույթի հարցերով տեղակալ Էռնեստո Օտտոնեին, կատարած աշխատանքի, Կոնվենցիայի դրույթների հանրահռչակման և կիրարկման, մշակութային բազմազանության խթանման համար:

Նիստի ավարտին արձանագրողն ընթերցեց արձանագրությունը, ապա ելույթ ունեցան Կոնվենցիայի քարտուղարը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշակույթի հարցերով տեղակալ Էռնեստո Օտտոնեն: Նա շնորհակալություն հայտնեց ջերմ

խոսքերի և բարեմաղթանքների համար, միաժամանակ կարևորեց կոմիտեի և քարտուղարության աշխատանքը, նշելով որ տնօրինությունը շարունակելու է խրախուսել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ու հասարակական կազմակերպությունների մասնակցությունը կոմիտեի աշխատանքներին և իր ընդունած որոշումներով նպաստելու է արվեստագետների իրավական կարգավիճակի ամրապնդմանը, ստեղծարար ոլորտի զարգացմանը:

Նիստի եզրափակեց նախագահողը, ով շնորհակալություն հայտնեց քարտուղարությանը լավ աշխատանքի և նիստը պատշաճ կազմակերպելու համար, ապա նաև Կոմիտեի և Բյուրոյի անդամներին՝ ակտիվ համագործակցության համար:

Գործուղման ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-յում ՀՀ ներկայացուցչության հետ քննարկել եմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում 2026-2027 թվականներին կայանալիք հոբելյանական ծրագրերի ժամկետները և կազմակերպման մանրամասները:

Գործուղման ընթացքում՝ այցելել եմ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գրասենյակ, որտեղ հանդիպում եմ ունեցել Ֆրանկոֆոնիայի միջազգային խաղերի մշակութային հարցերի պատասխանատու Նատալի Դեմարտիի հետ, ում հետ քննարկել և համաձայնեցրել ենք մշակութային անվանակարգերի անցկացման վայրերը, հստակեցրել խաղերի ժյուրիի կազմի ներկայացման հարցերը, փոխանակվել տեղեկատվությամբ՝ անվանակարգերի տեխնիկական պահանջների վերաբերյալ:

## 8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- **Նիստի ավարտին հաստատվեց արձանակագրությունը, որում ներառվեցին քննարկված որոշումները, որոնք հետագայում ուղարկվելու են մասնակից երկրներին և հասանելի են լինելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի կայքէջում:**
- **Որոշվեց, հաջորդ՝ 20-րդ նիստը անցկացնել 2027 թվականի հունվարի 12-15-ը:**

- Բյուրոյի նախագահ ընտրվեց ՅՈՒՆԵՍԿՕ-յում Ջիբութիի ներկայացուցիչը, փոխնախագահող երկրներ ընտրվեցին Ադրբեջանի, Բելգիայի, Պանամայի, Ֆիլիպինների ներկայացուցիչները, արձանագրող-զեկուցող՝ Թունիսի ներկայացուցիչը:
- Անդամ երկրները իրենց Թվային միջավայրի կոնվենցիայի կիրարկման դիրեկտիվների փոփոխության վերաբերյալ իրենց առաջարկությունները կոնվենցիայի քարտուղարություն կներկայացնեն մինչև 2026 թվականի ապրիլի 15-ը:
- Քարտուղարությունը առցանց քննարկում կկազմակերպի թվային միջավայրի և դիրեկտիվների վերաբերյալ 2026 թվականի հոկտեմբերին: Փաստաթուղթը կամփոփի 2026 թվականի նոյեմբերին և կներկայացվի հաջորդ՝ 20-րդ նիստին՝ 2027 թվականին:
- Հրաչյա Աճառյանի հոբելյանական միջոցառումները ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կկայանան տարեվերջին և կուղեկցվեն համերգային ծրագրով: Հաջորդ տարի ապրիլին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կկայանան Հանրապետության հրապարակի հիմնադրմանը նվիրված ցուցահանդեսը և Հայաստանի ջազ նվագախմբի համերգը:
- Ֆրանկոֆոնիայի խաղերի կազմակերպության հետ համաձայնեցվեցին մշակութային անվանակարգերի անցկացման վայրերը, հստակեցվեց ժյուրիի կազմի ներկայացման հարցերը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ձեռք բերված պայմանավորվածությունները.

1. Մինչև 2026 թվականի ապրիլի 1-ին տանսօրյակը Կոնվենցիայի քարտուղարություն ներկայացնել Հայաստանի դիրքորոշումը թվային միջավայրի կոնվենցիայի դիրեկտիվների, արձանագրության և հավելվածի վերաբերյալ:

2. Մինչև 2026 թվականի մարտի 1-ի տասնօրյակը ՅՈՒՆԵՍԿՕ-յում ՀՀ մշտական ներկայացուցչություն փոխանցել տեղեկատվություն 2026 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կայանալիք Հրաչյա Աճառյանի հոբելյանական միջոցառման և համերգային ծրագրի վերաբերյալ, ինչպես նաև 2027 թվականին ապրիլին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կայանալիք Հայաստանի ջազ նվագախմբի համերգի և Հանրապետության հրապարակի հիմնադրմանը նվիրված ցուցահանդեսի վերաբերյալ:

**3.** Մարտի վերջին ամփոփել Ֆրանկոֆոնիայի միջազգային խաղերի Հայաստանի մշակութային պատվիրակության կազմը և այն ներկայացնել խաղերի գրասենյակ:

**Սվետլանա Սահակյան**

25.02.2026